


ՅՈՒՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

Ազգային Պատրիարքարանի

ՀԱՅԿԻ ԳՅՈՍ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ



ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԻՆ

ՆԻՍՏ Է

20 ՅՈՒԼԻՍ 1879



Կ. ՊՕԼՅՍ

1879

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Կ. Ա. ՊԱՐՈՆԵԱՆ, Ի ՏՊԱՐԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

11 Գում-Գաբու, Պատրիարքարանի փողոց 11

ԴԻԻԱՆՔ ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՅ

ՄԱՅԻ ԴԻՒՆ

Ստեփան փաշա Ասլանեան	Ա. Ա. Բենամարտի
Տիգրան էֆէնտի Եռսուֆեան	Բ. »
Յարութիւն էֆէնտի Մէրեէմ-Գուլի	Գ. »
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան	Ա. Ա. Բենամարտի
Գասպար էֆէնտի Չէրազ	Բ. »
Գարեգին էֆէնտի Մելիքեան	Գ. »

Չեւննասուրբեան դիւան

Յարաբերուրբեան դիւան

Խորէն Արքեպիսկոպոս Նար-Պէյ
Յովհաննէս Գազանայ Մկրեան
Տիգրան էֆէնտի Եռսուֆեան

Մկրտիչ էֆէնտի Էսաեան
Բարսեղ էֆէնտի Հալաճեան
Պօղոս էֆէնտի Պառնասեան

Դաստիարակութեան դիւան

Իրասուրբեան դիւան

Սերգիւն էֆէնտի Ա. Բենամարտի
Ռէթէոս էֆէնտի Պէրպէրեան
Գասպար էֆէնտի Չէրազ

Ներսէս վարդապետ Ասլանեան
Աւաքել էֆէնտի Ալթուն-Տիւրքի
Նշան էֆէնտի Օտեան

Կարաւոնգ դիւան

Նախանճեռնութեան դիւան

Մինաս էֆէնտի Գափամաճեան
Յովհաննէս էֆէնտի Կրճիկեան
Աբիկ էֆէնտի Ռենճեան Ա. Բենամարտի

Տարթու Ռափայէլեան էֆէնտի
Յարութիւն էֆ. Մէրեէմ-Գուլի Ա. Բենամարտի
Միհրան էֆէնտի Չօպանեան

Համարակալութեան դիւան

Խմբագրութեան դիւան

Ստեփան էֆէնտի Փափազեան
Քրիստոստուր էֆ. Ղազարոսեան Ա. Բենամարտի
Համբարձում էֆէնտի Մաղպուրեան

Կարապետ էֆ. Խլթիւճեան Ա. Բենամարտի
Գարեգին էֆէնտի Մելիքեան
Համբարձում էֆէնտի Արաճաճեան

Ելմուական յանձնախումբ

Քրիստոստուր էֆէնտի Ղազարոսեան
Ղազար էֆէնտի Հովուեան
Մարդիս էֆէնտի Գափամաճեան
Մկրտիչ էֆէնտի Մելիքեան

ԱՉԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1879 ԱՄԵՆ

Ն Ի Ս Տ Է

20 ՅՈՒՂԻՍ 1879

ՆԱԽԱԳԱՀ. — Տ. Մատթէոս Եպս. Իզմիրեան (Պատր. փոխանարդ.)

ԱՏԵՆԱՊԵՏ. Թ. էֆէնտի Մէրեէմ-Գուլի (Դեր-Ատենապետ)

ԱՉԳԱՅԻՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ

ԿԵՔՐՈՆԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	ԵՐԵՍՓՈՒԱՆՔ (Ա. Վ. Իճակ)	ԳՈՒՄԱՐՈՒ ԿԵՒԻԿ ՓԱՂԱ ԵՆ ԳՈՒՄԱՐՈՒ ԴՈՒՐԱ	ԻՆՍԿՐՄԱՐ Ս. ԿԱՐԱՎԷՍ
Ա. Վ. Իճակ	Գուճաբու, Կեւիկ փաշա		Ինսկրմար Ս. Կարավէս
1 Կարապետ Եպս. Անրորեան	21 Գրիգոր Պէրպէրեան Բ. 2	49 Միհրան Պանճէզապուրեան Բ.	49 Միհրան Պանճէզապուրեան Բ.
2 Ամբրոսիոս Վ. Ռուբինեան Բ. 3	22 Գէորգ Ստիմարաճեան Բ. 2	50 Պօղոս Թորգոմեան	50 Պօղոս Թորգոմեան
3	23 Խաչիկ Մանկասարեան Բ. 3	51 Նիկողոս Արաճաճեան	51 Նիկողոս Արաճաճեան
4	24 Կարապետ Աղարձաճեան Բ. 2	52 Տրդատ Փափազեան Բ.	52 Տրդատ Փափազեան Բ.
Բ. Վ. Իճակ	25 Համբարձում Մաղպուրեան Բ.	(Գ. Վ. Իճակ)	(Գ. Վ. Իճակ)
5 Մատթէոս Եպս. Իզմիրեան	26 Մինաս Գափամաճեան	Գասքմ բաշա	Գասքմ բաշա
6 Պօղոս Վ. Թօլտամեան Բ. 2	27 Յովհաննէս Պոյաճեան Բ. 3	53 Գասպար Չէրազ	53 Գասպար Չէրազ
7 Յովհաննէս Բ. Մկրեան	28 Ն. Մէղպուրեան Տօթթօր Բ. 2	Բէրա	Բէրա
8 Գրիգոր » Աճէմեան Բ. 2	29 Պօղոս Պառնասեան	54 Աբիկ Ռենճեան	54 Աբիկ Ռենճեան
Գ. Վ. Իճակ	30 Սարգիս Աղարձեան Բ. 3	55 Գրիգոր Ալթունիճեան Բ. 2	55 Գրիգոր Ալթունիճեան Բ. 2
9 Վահան Վ. Տ. Մինասեան Բ. 3	31 Սահակ Ապրօ	56 Գրիգոր Օտեան	56 Գրիգոր Օտեան
10 Յակոբ » Ա. Փափազեան Բ. 2	32 Սենեքերիմ Մանուկեան Բ. 3	57 Սերգիւն	57 Սերգիւն
11 Սահակ Բ. Տ. Սարգսեան Բ. 2	33 Բարթոլոմէ Բարձրապետեան	58 Ռափայէլեան Տօթթօր	58 Ռափայէլեան Տօթթօր
12 Խորէն » Փէլիպանեան Բ.	34 Ատովմ Տէրպէնց Բ.	59 Միքայէլ Մօմճեան Բ. 3	59 Միքայէլ Մօմճեան Բ. 3
Գ. Վ. Իճակ	35 Գէորգ Ապառազեան Բ. 3	60 Կարապետ Քաղապետ Բ. 2	60 Կարապետ Քաղապետ Բ. 2
13 Ներսէս Վ. Ասլանեան	36 Յ. Մէրեէմ-Գուլի	61	61
14 Իգնատիոս » Նիշէճեան	37 Աւետիս Կիրտաղեան Բ. 2	62	62
15 Սուքիաս Բ. Ստեփանեան	(Բ. Վ. Իճակ)	Միջազիւղ	Միջազիւղ
16 Յարութիւն Անրորեան	Պէլիկրաշ	63 Յակոբ Նորատուկեան Բ.	63 Յակոբ Նորատուկեան Բ.
Ե. Վ. Իճակ	38 Անդրանիկ Կրճիկեան	64 Տիգրան Եռսուֆեան Բ. 2	64 Տիգրան Եռսուֆեան Բ. 2
17 Խորէն Արք. Նար Պէյ Բ. 2	39 Ալիքսան Թօրատաճեան Բ. 3	65 Մկրտիչ Գաղանճեան Բ. 2	65 Մկրտիչ Գաղանճեան Բ. 2
18 Յովհաննէս Վ. Փափազեան Բ. 2	40 Բարսեղ Հալաճեան	66 Աւետիս Գօրջեան	66 Աւետիս Գօրջեան
19 Խորէն » Կ. Բոյսեանց Բ. 3	Եկնիգաբու	67 Նշան Օտեան Բ.	67 Նշան Օտեան Բ.
20 Գարեգին » Թաթարեան Բ.	41 Մկրտիչ Քիւրքճիխանլեան	Պէլյոզ Ե. Ղալաթիա	Պէլյոզ Ե. Ղալաթիա
Բ. Բացակայութիւն առաջին	42 Սեպուհ Մաղսուտեան Բ. 2	68	68
Բ. 2 Բացակայութիւն երկրորդ	43	(Գ. Վ. Իճակ)	(Գ. Վ. Իճակ)
Բ. 3 Բացակայութիւն երրորդ	44	Ինսկրմար Ս. Խաչ	Ինսկրմար Ս. Խաչ
Բ. 4 Բացակայութիւն չորսորդ	45 Սիմոն Յէլիկեան Բ. 2	69 Յովհաննէս Էսաեան Բ. 2	69 Յովհաննէս Էսաեան Բ. 2
	46 Ստեփան Ասլանեան Բ.	70 Ստեփան Պէլիկեան	70 Ստեփան Պէլիկեան

Գատրգլխի	ԳԱՒԱՌԱԿԱՆ ԵՐԵՍՓՈՒԱՆՔ	Մուշ
71 Կարապետ Շահապետի		124 Ստեփան ֆախազեան
72 Մկրտիչ Մուրատեան	Բ 2	Տիվրիկ
Նարյըգաբու.		122 Նշան Գարազաշ
73 Յակոբ Եղիշիկեան	Բ 2	Զեյրուհի Է. Մարաշ
Եհնիմանայիկ Սամարիայ	104 Սիմոն Մադուտեան	Բ 2
74 Պօղոս Մկրտիչեան	Բ 2	123
Թովգափու.	102 Մ. ֆախազեան Տօրթօր	Տրապիզօն
75 Յովհաննէս Մարգարեան	Աղրիանուպօլիս	124 Տիգրան Տ. Ներսէսեան
Էյուպ Ս. Եղիա Է. Ս.	103 Վրէժն Ապուլլահ	Բ
Աստուածածին	Նիկոմիդիա	Պադուստ
76 Գարեգին Յ. Մէլիքեան	104 Կ. Ս. Իւթիւճեան	125 Մելքօն Իսկէնտէրեան
Գուրուբէշմէ	Վան	Բ 2
77 Ասափա Իկիտպաշեան	105	Տիգրանակէրտ
Զիսար Է. Պօլսմի գլխի	Ղարաճիսար	126 Միհրան Զօպանեան
78	106	127
Նոր գլխի Է. Սբէնիա	Արաբկէր	Աղրամար
9 Ղազար Հովուեան	107 Կարապետ Խաչիկեան	128
Գալստ	Բաղէշ	Հայկալ Է. Այնթապ
80 Մկրտիչ Գ. Էսաեան	108	129
81 Յովհաննէս Կրճիկեան	Պրուսա	Սեբաստիա
82	109 Քրիստոստուր Ղազարոսեան	130 Մկրտիչ Յ. Մէլիքեան
Քարակէօմրիակ	Եւդոկիա	Թուսճուլիս
83 Սեպուհ Թիւրապեան	110	134
84	Ամասիա	Կարս
(Ե. Վրճալ)	111 Համբարձում Ալաճաճեան	132 Աբրահամ Յ. Այվազեան
Սամարիա	Բալու.	Զմշկածազ
85 Ալիքսան Պէլիքեան	112 Յովհաննէս Աղնաւորեան	133 Համբարձում Սարգէլ շիշեան
86 Եղիազար Մէլիքեան	Բ 4	Գաղատիա
87 Մինաս ճափճաֆեան	Եղեսիա	134
88 Նազարէթ Շահապետեան	113 Յակոբ Իւթիւճեան	Ատանա
89 Յարութիւն Թիւլեան	Մանճըլլիս	135
90 Յակոբ Արշակ	114	Սըղէրդ
91	115	136 Մատթէոս Ալէքսան
92	Երզնկա	Բ
93	116 Ռէթէոս Պէրպէրեան	Եօզղատ
94	Թէքիրտաղ	137 Լօղօֆէթ Պալեօզեան
Խասգլխի	117 Տիգրան Գ. Սինանեան	Բ 2
95 Առաքել Ալթուն Տիւրքի	Կեսարիա	Մալաթիա
96 Ռէթէոս Պէլիկեան	118 Գէորգ Գըլըճեան	138 Գէորգ Վարդանեան
97 Սարգիս Աբրահամեան	Խարբէրդ	Բ
98 Մ. Արծրունի Տօրթօր	119	Իզմիր
99 Սարգիս Քալուքեան	Պալքրէս	139 Պապի Պապօեան
100 Աթանազիէս Արապեան	120	Եզիպտոս
		140

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

Ա. Խնդիր ուղղակի տրոց. — Վիճաբանութիւն ՚ի վերայ Համարակալութեան գիւանի տեղեկագրոյն.

Բ. Խնդիր Սահմանադրութեան վերաքննութեան. — Վիճաբանութիւն ՚ի վերայ Նախահաւանութեան գիւանի տեղեկագրոյն.

ԱՅԵՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԵՐ

Ի բացակայութեան Ամենապատիւ Ս. Պատրիարք Զօր՝ Նորին Սրբազնութեան Փոխանորդ Իզմիրլեան Տ. Մատթէոս Սրբազանի Նախագահութեամբ և Գ. Մէրեշի-Գուլի էֆէնտի Ատենապետութեամբ Ատենան բացուեցաւ ժամը 7 1/2 ին, ի ներկայութեան 33 Երեսփոխանաց, որոց թիւն 45 ի յանդեցաւ ի վերջէ:

ինչպէս նաեւ Ե. ին՝ որ դռնփակ էր, դռնբաց մասին ատենագրութիւնը տպեալ հաղորդուած են երեսփոխանաց, և անվաւեր կը մնան դեռ ևս ժողովին. իսկ վերջին Զ. նիստը, նմանապէս դռնփակ, ունի իւր նախորդին նման դռնբաց մաս մը և ատենագրութիւն տպագրելի, որ թէեւ խմբագրեալ յանձնուած է մամուլոյ, սակայն ի լոյս ելած չէ ցարդ: Հետեւապէս Ատենապետ էֆէնտի յարեց թէ ի բաց թողով առ ժամս այդ վերջինը՝ միւս երկու նիստերու ատենագրութիւնները ժողովոյ գիտողութեանը սխալ ենթարկէ, և հրաւիրեց զերեսփոխանս ի գիտողութիւն Գ. նիստի ատենագրութեան վրայ:

Վաւերացումն նախընթաց Գ. Է. Ե. Նիստերու ատենագրութեանց

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երես 113 Ա. սիւնակ. Իւթիւճեան Յակոբ էֆէնտիէն ետքը ըսած եմ, «Մննդոց և վախճանմանց համար ենթադրեալ 120,000 դր. հասոյթը թերեւ չը

գոյանայ, այդ մասին գրուելիք կանոնագրին սահմանման կամ գործադրութեան յապաղմամբը. բայց ենթադրեալ պահեստի գումարը նախատեսած է այդ հաւանականութիւնը»:

Եւ դարձեալ, երես 119 սիւնակ Ա. «Ներքին կանոնագրին 5 բղ. յօդուածը ժողովը կրնա գումար ըստ բացատրութեան Ստեփան փաշայի» ըսուած է, կարծեմ թէ աստ բառի սխալ մը կայ, պէտք էր ըսել «ըստ առաջարկութեան Ստեփան փաշայի», քանզի երես 116 սիւնակ Բ. Ստեփան փաշայի առաջարկած յօդուածները, կանոնագրին 82 եւ 83 յօդուածոց իրր վերաբնութիւն ամփոփուած է. հետեւաբար ծրագրին 5 բղ. յօդուածին տեղ այդ յօդուածները պէտք է որ ժողովէն ընդունուած լինին: Այս գիտողութիւնը կրնեմ, որ մի գուցէ չբփոթութիւն ծագի ասպագային մէջ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Իրաւացի կը թուի եւ ինձ փախազեան էֆէնտիի այս վերջին գիտողութիւնն: Ես ալ չկրցի ըմբռնել թէ այդ խնդրոյն վրայ Ստեփան փաշայի ըրած խօսքերն որ յաւարտ ատենագրութեան քանի մը յօդուածով ամփոփուած են, ներքին կանոնագրին մէջ յաւելնալիք յօդուածոց Ե. Ե ըստ սարանող բացատրութիւններ են, թէ ոչ՝ նոյն ինքն կանոնաց կարգը դասելի յօդուածներ. թէ եւ ատենագրութիւնն՝ ժողովին քուէարկութեան արդիւնքը նշանակած պահուն՝ դանոնք իբր բացատրութիւն կը նկատուի: Այս կէտը սակայն Ստեփան փաշան կրնայ մեզ պարզել, եւ վասն զի ինք ներկայ է այսօր, հարկ կըլլայ ուրեմն վերապահել:

Աւրիշ փոքրիկ գիտողութիւն մ' ալ ես ունիմ: — Նիստ Գ. երես 118. սիւնակ Բ. խօսքիս սկիզբէն փոքր մաս մը պակաս է, ամբողջը սա էր «կը տեսնեմ որ իմ գիտողութիւններս թիւր ըմբռնուած են եւ ըստ այնմ կը մեկնուին, զորս ուղղելու համար երկարօրէն բացատրելու հարկ կը ծագի. բայց ըստ օրում օրը տարածմամբ է եւլն. . . .»

Աւրիշ գիտողութիւն տեղի չունենար, հետեւապէս Ատենագրութեան էֆէնտին քուէի կը

դնէ Գ. նիստի ատենագրութիւնն եւ ժողովն ընդունելով միաձայն՝ կը վ.Ա.Ե.Բ.Ա.Յ.Ն.է: զայն եզրած գիտողութեամբ հանդերձ:

Յետոյ Ատենագրութեան էֆէնտին Ե. նիստի դանոնք մասի ատենագրութեան վրայ ի դիտողութիւն կը հրաւիրէ գերեւտիտանս, սակայն որ եւ է գիտողութիւն տեղի չունենալով Ատենագրութեան էֆէնտին քուէի կը դնէ սոյն ատենագրութիւնը, եւ ժողովը միաձայն ընդունելով զայն՝ կը վ.Ա.Ե.Բ.Ա.Յ.Ն.է: անփոփոխ:

2.

Բացակայութիւն Երեսփոխանաց

Երեսփոխաններէն՝

- 1. Տ. Յովհաննէս վարդապետ փախազեան
- 2. Ատեփան փաշա Ասլանեան
- 3. Միքայէլ էֆէնտի Մօսճեան

գրով ծանուցած լինելով թէ անձնական տկարութեան պատճառաւ հարկադրեալ են այսօրեայ նիստէն բացակայ մնալ, Ատենագրութեան էֆէնտին անոնց անունը յիշատակեց եւ նոցա բացակայութիւնքն իբր կանոնաւոր արձանագրել տուաւ ներկայութեան տուժարին մէջ:

Ասոնցմէ զատ նաև՝

Գրիգոր էֆէնտի Սէլիմիէճեան՝

նամակ մ'ուղղելով ծանուցած էր թէ բանաւոր պատճառաւ մը չի պիտի կարենայ այսօր ժողովին ներկայ գտնուիլ. բայց ըստ օրում պատճառը չէր բացատրել, Ատենագրութեան էֆէնտին գիտել տուաւ որ ըստ կանոնի պարզապէս բացակայ կը նկատուի, եւ այսպէս արձանագրել տուաւ ներկայութեան տուժարին մէջ:

3.

Շիշեճեան Տ. Իգնատիոս վարդապետի նրաժարականը յերեսփոխանութենէ

Շիշեճեան Տ. Իգնատիոս վարդապետի կողմէ մատուցեալ յետադայ հրաժարագիրը կարգացուեցաւ:

Վսեմախոյլ Ատենագրութեան փաշա Ա. Պ. Երեսփոխանական Պատկառելի Ժողովոյ

Ազգ. կեդր. վարչութեան Խառն Ժողովոյ սրոյման համաձայն՝ վաղիս պիտի մեկնիմ ի Դերջան Առաջնորդական Տեղապահութեան պաշտօնով. հետեւաբար հարկ է ինձ այսօրու ընէ իմ հուսկ ողջոյնս ձօնել պատկառելի ժողովոյդ, ինչպէս արդէն կրօնական Սրբադուամար ժողովոյ անդամակցութեան մատուցած եմ իմ հրաժեշտս:

Պարտ անձին կը համարիմ խոստովանիլ, Վսեմախոյլ Տէր, թէ Հայկական տարեգրութիւնը նուաասիս համար յիշատակաց արժանի հետք մը չթողուց, թէ Պատկառելի Երեսփոխանութեանդ մէջ եւ թէ՛ վարչութեան կրկին ժողովոյ մէջ. գիտելի զայս կանխաւ եւ սակայն Ազգին կամաց հպատակելն ալ իմ նախրական պարտաւորութիւնս էր, այս պարտաւորութիւնն է ահաւասիկ որ դիս կը մղէ մինչև ի Դերջան երթալ որ ի Բարձր Հայս գաւառ մ'է:

Հայաստան մեր քաջազանց որրանը եւ իրենց տարած յաղթանակի հանդիսարանը, այսօր երեք գաշնակից Պետութեանց տակ կը հեծէ, որ է ազիտութիւն, ազգատութիւն եւ բանութիւն, մեք իսկ ազգովին ներկայ աշխարհաբութեան անկ շաւղին մէջ կը խարխափիմք, հետեւաբար մեր ամենուր իղձն

ու պարտաւորութիւնն է Հայ Ժողովուրդըն այս թշուառութենէն ազատել եւ առաջնորդել դէպ յիւրն փրկութեան լեռնադաւառն ի Հայաստան. ուստի երբ Աստուած կը զօրացնէ զմեզ, երբ Ամեն. Տ. Ներսէս Սրբազան Պատրիարք Հայր գլուխ կեցած է այս ազգին եւ Տ. Մատթէոս Սրբազան կը փոխանորդէ նորին Բարձր Սրբազնութեան, եւ երբ վերջապէս Չեր Վսեմութիւնն լւր բարձր հանձարովը, վարժ եւ ներհուն քաղաքագիտութեամբը կատենապետէ վսեմ տարերքներով կազմակերպեալ երեսփոխանութեան մը, սյլ եւս մեք Եկեղեցականքս ինչո՞ւ խուսափիմք մեր խղճի պարտաւորութիւնը կատարելէ. ուրեմն այսօրու ընէ կուխտեմք մեր անձը ու մեր կեանքը Հայրենեաց նուիրել, եւ դուք ալ Պատկառելի Հարք եւ Տեսրք Երեսփոխանական Ժողովոյ, պարտիք աղօթել ի դաւառս դանուող եկեղեցական Ս. Հարց համար, եւ քաջալերել զիրենք իրենց ազգօգուտ ջանից մէջ. սյս ըլլայ ահաւասիկ Չեր ուխտն ալ եւ պայմանը:

Մնամ խոնարհ յարգանք. Իգնատիոս վրդապ. Շիշեճեան 20 Յունիս 1879 ի կ. Պօլիս (Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը տեսնէք որ մեր երեսփոխան ընկերներէն Տ. Իգնատիոս վարդապետ վարչութեան կողմէ գաւառական պաշտօնի մը կոչուելով կը թողու իւր երեսփոխանական ամբոն, եւ ազգասիրական զգացումներով փառեալ կը մատուցանէ մեզ իւր վերջին ողջոյնն, դէպ յիւր պաշտօնատեղին մեկնելու համար: Այս հրաժարականը խնդրոյ նիւթ ընծայելու բնութիւն չունի. սակայն եւ

Թէ զխողովութիւն ունեցող կայ, կը հրաւիրեմ խօսք աննելու:

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. ԷՖ. — Շնորհակալ ենք իւր արտայայտած զգացումներուն համար, եւ ուրախ ենք որ իւր հովուական պարտաւորութիւնը կատարելու կերթայ:

Ուրիշ որ եւ է զխողովութիւն տեղի չունենար եւ Ատենապետ էֆէնտին քուէի քննելով սոյն հրատարականը, ժողովը կ'ընտրուի զայն միաձայն:

Հետեւապէս Տ. Իգնատիոս վարդապետ որ ներկայ էր՝ կը մեկնի ժողովէն:

4.

Խառն ժողովոյ յայտագիրը կրօնական եւ Քաղաքական ժողովներէն հրատարեալ անդամոց մասին

Ազգային վարչութեան Խառն ժողովոյ կողմէ ուղղեալ յետադայ յայտագիրը կարգացուեցաւ:

Վսեմնոփայլ Ատենապետ փաշա Ազգային ժողովոյ

Ազգային վարչութեան կրօն. ժողովին իր անդամներէն եղնիկ, Հմայեակ եւ Իգնատիոս վարդապետաց Առաջնորդական պաշտօնով Մայրաքաղաքէս մեկնելուն պատճառաւ իր ամբողջութիւնը կորուսած ըլլալով, հարկ կը համարի դիմել Ազգային ժողովոյ, որպէս զի բարեհաճի ըստ օրինի յիշեալ երեք անդամոց տեղ նոր ընտրութեան համար պէտք եղածը անօրինել եւ կրօնական ժողովոյ անդամոց թիւն ամբողջացնել:

Նոյնպէս Քաղ. ժողովն իր անդամներէն

Էրէն կիւլպէնկեան Աբէլ, Հովուեան Ղազար եւ Ծերունեան Յակոբ էֆէնտիններուն ընտրութեան օրէն հրատարած ըլլալուն եւ Ստիմարաճեան Գէորգ էֆէնտիի բաւական ժամանակ իր պաշտօնը վարելէ ետեւ հրատարած ըլլալուն պատճառաւ իր ամբողջութիւնը կորուսած ըլլալով, հարկ կը համարի նոցա հրատարագըրը ներկայել Ազգային ժողովոյ, եւ խնդրել որ բարեհաճի ըստ օրինի յիշեալ չորս անդամոց տեղ նոր ընտրութեան համար պէտք եղածը անօրինել եւ Քաղ. ժողովոյ անդամոց թիւն ամբողջացնել:

Մնամք յարգանք

Ի դիմաց կրօն. ժողովոյ

Բ. Ատենապետ Բ. Ատենապետ Խ. Քննչ. Փենիվանեան Ն. վրդպտ. Ասլանեան

Ի դիմաց Քաղ. ժողովոյ

Ատենապետ Վ. Ատենապետի Ա. Ալբուհ Տիւրքի Լ. Պալեօգեան

20 յուլիս. 1879

(Յետ ընթերցման)

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը տեղեկանաք վարչութեան յայտագրէն, երեք անգամ պակսեր է կրօնական ժողովէն, զաւառաց մէջ անոնց պաշտօն յանձնուելուն պատճառաւ, որոց տեղ վարչութիւնը նոր ընտրութիւն կը խնդրէ. իսկ Քաղ. ժողովոյ անդամներէն չորսը հրատարակ են պաշտօնէ, որոց հրատարակներն վարչութիւնն աւանդած է զիւանիս: Այս հրատարակներն պարզ են եւ ոչ պատճառաբանեալ, միթէ կուզէ ժողովը անոնց ընթերցումը լսել, թէ զո՞հ կը լինի ատենագրութեան մէջ արձանագրեալ տեսնելով զայնս:

Ժողովն հրատարագրոց ընթերցումը չպահանջեր եւ հաւանութիւն կը յայտնէ զանոնք ատենագրութեան մէջ արձանագրեալ տեսնելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — կրօնական ժողովոյ անդամոց հրատարակը կատարուած իրողութիւն մ'է. անոնցմէ միոյն հրատարականն այսօր քուէարկեցիք, միւս երկուքն ալ, ինչպէս կը տեղեկանամ Ատենապետի էֆէնտիին, առաջնորդական պաշտօնով մեկնած ըլլալով, բնականաբար հրատարակ են թէ կրօնական ժողովականութենէ եւ թէ երեսփոխանութիւնէ. կը մնայ ուրեմն հրատարակոց տեղ նորը ընտրութիւնն որոշել. եւ յանձնարարել Նախագահ Սրբազանին որ շնորհ ընէ ըստ Սահմանադրութեան եկեղեցական Համագումար ժողով հրաւիրելով, ընտրելեաց եռապատիկ ցանկ մը պատրաստել եւ բերել ժողովիս, որպէս զի նոր ընտրութիւնները կատարէ եւ կրօնական ժողովոյ ամբողջութիւնը լրացնէ:

Ժողովը կ'որոշէ կրօնական ժողովէն հրատարակ երեք անդամոց տեղ նոր ընտրութիւն կատարել, եւ կը յանձնարարէ Նախագահ Սրբազանին ընտրելեաց եռապատիկ ցանկն ըստ Սահմանադրութեան պատրաստել տալ եւ բերել ժողովին:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Այժմ Քաղաքական ժողովոյ անդամներէն կիւլպէնկեան Աբէլ, Հովուեան Ղազար, Ծերունեան Յակոբ եւ ընտրութեան Գէորգ էֆէնտիններու հրատարականներն մի առ մի քուէի պիտի դնեմ, եթէ այս մասին խօսք ուղղող չկայ:

(ժողովը կը լսէ:)

Ահաւասիկ Ծերունեան Յակոբ էֆէնտիի հրատարակը:

Գերատաւախ Սրբազան Հայր Մեծաւ գոհունակութեամբ ընթերցայ Ազգային վարչութեան Քաղաքական ժողովոյ անդամ ընտրուած լինելս զեկուցանող երկտողնիդ, յորում խնդամիտ շնորհաւորութեամբ յընդունելութիւն կը յորդորէք զիս:

Արգարեւ Ս. Հայր, Ազգային ժողով

վոյ սոյն վստահութիւնը՝ որ առ իս, անկեղծ շնորհակալեաց արժանի է, որով նուաստս պատուել բարեհաճեցաւ, բայց աւանդ սիրելի աղգիս ծառայելու անհուն վախճան ամուլ կը մնայ, զի ի մօտոյ տեղի ունենալիք անհրաժեշտ ուղեորութիւնս կը հարկադրէ զիս խնդրել ի ձէնջ, որ հաճիք ընդունիլ ակամայ հրաժեշտիս հետ խոնարհ յարգանացս անկեղծ հաւաստին, որով եմ միշտ Ձերդ Սրբազնութեան ամենախոնարհ ծառայ.

Յակոբ Ծերունեան

11 Փետր. 79

Պալատ

Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Ծերունեան Յակոբ էֆէնտիի հրատարականն, եւ ժողովը կ'ընտրուի զայն միաձայն:

Ահաւասիկ Հովուեան Ղազար էֆէնտիի հրատարակը:

Գերատաւախ Ս. Հայր

Ներկայիս կը փութամ իմ շնորհակալութիւնս եւ խորին յարգանքներս մատուցանել պատկառելի Ազգային ժողովոյ, որ զիս Ազգային վարչութեան Քաղ. ժողովոյ անդամակցութեան կոչել հաճեր է իւր քուէիւք, որուն Ձեր Սրբազնութիւնը թարգման կանգնելով կը հրաւիրէ նուաստս շնորհաւորելով հանդերձ, ի պաշտօնավարութիւնս:

Արդ՝ Սրբազան Հայր, կաղաչեմ Գերատաւախութեանդ որ ընդունիլ հաճիք նուաստիս հրատարականն եւ հաղորդելու որ անկ է, վասն զի իմ բաղմազբաղ վիճակս չներեր այս անգամ ընդունիլ այդ վախճակ եւ ամենակարեւոր պաշտօնը ըս-

տանձնել : Ուստի հաճեցէք կանխաւ իմ խորին յարգանքներս ընդունել որով մնամ Գերապատուութեանդ :

Ամենախոնարհ ծառայ

Յ. Ղազար Ս. Հովուեան

1879 Փետրվար 19

Ատենապետ էֆէնտին քուէի կը գնէ Հոփուեան Ղազար էֆէնտի հրաժարականն , եւ ժողովը կ'ընտրուի զայն միաձայն :

Ահաւասիկ կիւլպէնիկեան Սբէլ էֆէնտի հրաժարագիրը :

Ամենապատիւ Ս. Հայր

Փետրվար 10 թուականով և 322 համարով Սրբազնութեանդ մի հրաւիրագրերն ընդունելու պատիւ ունենալով յորում Քաղ. ժողովոյ անդամ ընտրուիս կը ծանուցանէք . սակայն գործիս մէջ ունեցած աւանձնութիւնս սոյն ընտիր պաշտօնն վարել ինձ երբէք չներելուն՝ ամսոյս 14 թուականաւ ցաւ ի սիրտ իմ հրաժարագիրը կը կրկնուի Սրբազնութեանդ :

Շնորհակալ եմ . ժողովդ կրկին կըրկին հրաւերները կրկնելով ինխտ , կը պատուէ նուաստնիդ . բայց ակամայ չկարենալ ընդունելու ստիպուած ըլլալս ցոյց տալով , խնդրեմ հաճեցէք ընդունիլ սոյն հրաժարագրոյս հաստատութիւնն և նըուաստութեանս հաւատին :

Որով մնամ ամենախոնարհ ծառայ

Աբել Կիւլպէնիկեան

23 Փետրվար 1879

Կ. Պոլիս

Ատենապետ էֆէնտին քուէի կը գնէ Եփէնտինի Աբէլ էֆէնտի հրաժարականն , եւ ժողովը կ'ընտրուի զայն միաձայն :

Ահաւասիկ Ստիմարաճեան Գէորգ էֆէնտի հրաժարագիրը :

Գերապատիւ Սրբազան

Պատրիարքական փոխանորդ Հայր

Ապրիլ 23 թուականաւ հրաժարագրիս ի պատասխանի՝ Սրբազնութեանդ Մայիս 14 ի շնորհարեր գրութիւնը առնելով , որով կը յայտնելիք թէ պատկառելի Քաղ. ժողովդ չընդունիր հրաժեշտ փութացեր էի անձամբ ներկայանալ Սրբազնութեանդ և յայտնել թէ անկարելի է շարունակել պաշտօնս :

Սակայն մինչև ցարդ ամեն ժողովի համար ստանալով հրաւիրագրեր , որոնք թէ Ձեր Սրբազնութեան և թէ Պատուարժան ընկերակցացս նուաստիս ցոյց տալ բարեհաճած համարման արդիւնքն ըլլալուն անտարակոյս եմ , կը փութամ խորին շնորհակալիքս յայտնել խոնարհարար և այս անգամ ալ վերջնական կերպիւ խնդրել որ ներէք ինձ և բարեհաճիք ընդունիլ , Սրբազան Տէր , ակնածական խորին յարգանայս կրկնեալ հաւատին :

Որով մնամ միշտ ամենախոնարհ ծառայ

Գեորգ Ստիմարաճեան

1879 Յունիս 13

Ատենապետ էֆէնտին քուէի կը գնէ ընտրութեան Գէորգ էֆէնտի հրաժարականն , եւ ժողովը կ'ընտրուի զայն միաձայն :

Հետեւապէս ժողովը կ'որոշէ նոր ընտրու-

թիւն կատարել . Քաղաքական ժողովն պակասած յիշեալ չորս անդամներուն տեղ :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Հարկ կըլլայ ուրևն ըստ կանոնի ատենապետաց գիւանը գումարել , որպէս զի Քաղ. ժողովոյ հրաժարեալ չորս անդամոց համար ընտրելեաց զեղջելի ցանկը պատրաստէ , եւ հաղորդէ ժողովն պէտք եղած ընտրութիւնը կատարելու համար Սակայն արժան է յիշել որ գիւանաց մէկ քանին չեն ընտրած ցարդ իրենց ատենապետներն , որով անհնար կը լինի ատենապետաց գիւանին զումարումն , եւ հետեւաբար որոշուած ընտրութիւնը . ուստի կը խնդրենք յիշեալ գիւաններէն որ չնորհ ընեն փութացնել իրենց ատենապետաց ընտրութիւնն , եւ ընդ հուպ հազորդել Մայր գիւանիս :

Յ.

Խնդիր ընտրութեան եկեղեցական երեսփոխանաց

(Միջադէպ)

Ղազարոսեան Ք. էֆէնտի կը յիշեցնէ ժողովն որ եկեղեցական դասէն երկու երեսփոխանք պակասած են արդէն , եւ Եղնատիոս վարդապետի հրաժարումը երեքի կը հասնի այժմ անոնց թիւը . ուստի պէտք է այս երեքին տեղ նոր ընտրութիւն կատարել :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Գիւանին կողմէ յանձնարարուեր է արդէն վարչութեան՝ առաջին վիճակէն պակասող երկու եկեղեցական երեսփոխանաց տեղ , զորս կը յիշէք , եւ որք են Տ. Գէորգ քահանայ Արժրունի և Տ. Արիստակէս քահանայ Մամբրէեան , նոր ընտրութիւն կատարել տալ . իսկ այս անգամ վերջինն ևւս կը ծանուցուի , եւ հետեւապէս երեք երեսփոխանաց ընտրութիւնն ի միասին կը կատարուի :

ԱՍԼԱՆԵԱՆ Տ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳ. — Հինգե-

րորդ վիճակէն ևւս Տ. Խորէն վարդապետ կիրոյն անպայման կերպով իւր հայրենիքը գացած է . պիտի դառնայ թէ ոչ՝ անյայտ է , եւ տեղը թափուր կը մնայ երկար ատենէ ի վեր , ուստի կարծեմ պէտք է նոր ընտրութեանց առթիւ այս պարտոյն ալ լեցնել :

ԻԹԻԻՃԵԱՆ Յ. Է.Ֆ. — Այո՛ , այո՛ , կը ձայնակցիմ :

ԱՏԵՆԱՊԵՏ Է.Ֆ. — Հարկ կը համարիմ յիշեցնել ձեզ որ ճանապարհորդութիւնն ըստ կանոնի ընդունելի պատճառ մ'է բացակայութեան , եւ երեսփոխան մը թէ եւ անորոշ պայմանաժամով մեկնած ըլլայ աստի , իւր հրաժարումը չենթադրեր այս անպատճառ , վասն զի կրնայ վերադառնալ նաեւ իւր աթոռը բազմիլ :

ԱՍԼԱՆԵԱՆ Տ. ՆԵՐՍԷՍ ՎԱՐԳ. — Իւր վերադարձին նկատմամբ տեղեկութիւն մը չունիմ , այլ զայս միայն գիտեմ որ երկար ժամանակէ ի վեր մեկնած է աստի , իւր հայրենիքն , ի Բարերդ , եւ աթոռ մ' ունինք որ պաշտպ է այս պատճառաւ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է.Ֆ. — Ստոյգ է , ճանապարհորդութիւնը հրաժարում չենթադրեր անպատճառ , ինչպէս գիտել տուաւ Ատենապետ էֆէնտին . բայց երբ ուղեւորը պաշտօնով կը մեկնի , կամ իւր ճանապարհորդութիւնը չ'ձանուցանէր ժողովն , անշուշտ հարկ կըլլայ հրաժարեալ համարիլ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. Է.Ֆ. — Արդարեւ ճանապարհորդութիւնն բացակայութեան ներքի պատճառ մ' է , սակայն երբ երկարատեւ լինի այս բացակայութիւնն ևւ պաշտօն յանձնուած լինի , հրաժարեալ կը համարուի բացակայ երեսփոխանը :

ԻԹԻԻՃԵԱՆ Կ Է.Ֆ. — Ըստ իս պէտք է այս տեսակէտէն նկատել Տ. Խորէն վարդապետի բացակայութեան խնդիրը , վասն զի կանոնին ուրիշ մէկ տրամադրութիւնը կայ , ու-

բու համաձայն Տ. Խորէն վարդապետ հրատարակել է արդէն : Երեսօրօսան մ'ըստ ներքին կանոնադրի երբ երեք յաջորդական նիստերէ բացակայ գտնուի , առանց բանաւոր պատճառ մը յայտնելու , հրատարակել համարուի ինքնին : Արդ՝ քանի որ Տ. Խորէն վարդապետ առանց իւր ճանապարհորդութիւնը ծանուցանելու՝ երկար ժամանակէ ի վեր բացակայ կը մնայ Ազգ. ժողովոյ նիստերէն , ի հարկէ զիւանը չըկրնար գուշակել անոր բացակայութեան պատճառն եւ զիստալ թէ ճանապարհորդ է , պիտի վերադառնայ թէ ոչ , հետեւապէս հրատարակել կը համարուի նա՝ ըստ կանոնի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Եթէ խնդիրը ճիշդ այդ պարագային մէջ եղած ըլլար , շատ իրաւացի էր Իւթիւճեան էֆէնտիի գիտողութիւնը բայց կէտ մը կայ որ անստուգութեան մէջ կը թողու գործը : Ներկայութեան տուժարին մէջ Տ. Խորէն վարդապետի անուան առջեւ կը տեսնենք որ պատճառաւ բացակայ բառերը նշանակուած են , եւ կատարուինք մտածել որ Տ. Խորէն վարդապետ ժամանակին իւր ուղեւորութիւնը ծանուցած ըլլալու է , որ կրցեր է զիւանն այդ յիշատակութիւնն ընել : Սակայն զիւանը չյիշեր թէ Տ. Խորէն վարդապետն այդպիսի գիր մը գրած է թէ ոչ , եւ վասն զի ինք իւր նախորդին ժամանակէն գտեր է այդ արձանագրութիւնն եւ զայն պահեր է իւր վիճակին մէջ : Այս պարագայից առջեւ՝ անշուշտ լուսողոյն է չչտապել , եւ յանձնարարել զիւանին որ պէտք եղած քննութիւնն ընէ , եւ լոյս տայ մեզ այս մասին , որպէս զի կարենամք գիտակցութեամբ պէտք եղած որոշումն ընել :

ՆԱԽԱԳԱՀ ԱՐԲԱԶԱՆ. — Կուզէի զիստալ թէ մինչեւ որ այդ քննութիւնը կատարուի , միւս ընտրութիւնը պիտի յետաձգուին :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ո՛չ , միայն Տ. Խորէն վարդապետի հրատարակած խնդրոյ ներքեւ է , իսկ միւս ընտրութիւնները կատարելու արգելք մը չկայ :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս ԷՖ. — Կարծեմ այս պարագային մէջ աւելի լուս կըլլայ գրել Տ. Խորէն վարդապետին եւ հրատարակել զինքն որ եթէ մտադիր չէ ի ժողով վերադառնալ ի Պօլիս եւ իւր պաշտօնը կատարել , իւր հրատարակածը մատուցանէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կերևի թէ աղէկ չը հասկցուեցաւ խօսքիս իմաստը : Ես ըսի թէ ուղեւորութիւնը հրատարակել չենթադրեր , եւ որովհետեւ Ատենադպիր էֆէնտիէն չկրցի լոյս մը քաղել թէ Տ. Խորէն վարդապետի մայրաքաղաքէս մեկնելն առ ժամանակեաց է թէ ոչ , զիտեւ տուի ժողովին թէ այս վիճակին մէջ՝ որ եւ է գործողութեան առաջ հարկ էր յանձնարարել զիւանին որ այս մասին պէտք եղած տեղեկութիւնները հայթայթէ : Այս էր իմ խօսքիս իմաստը , զոր մտքերը լուսաւորելու համար ըսի : Բայց կը տեսնէք որ Փափազեան էֆէնտի կատաճարկէ ուղղակի Տ. Խորէն վարդապետին գրել որ եթէ չսխալի շարունակել իւր պաշտօնը , գոնէ հրատարի : Արդ ըստ որում այս միջադէպը շատ երկարեցաւ եւ ատենական ուրիշ գործողութիւններ ալ ունինք կատարելու , զայն վերջացնելու համար կուզեմ ժողովին կամքն իմանալ թէ՛ արդի պարագայից մէջ Տ. Խորէն վարդապետի բացակայութեան քննութիւնը զիւանին յանձնարարելու կուզէ , թէ ուղղակի Տ. Խորէն վարդապետի գրել , ինչպէս առաջարկեց Փափազեան էֆէնտին :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խնդիրը քուէի կը դնէ եւ ժողովը 5 քուէի ընդդէմ՝ 9 քուէով ԿՈՐՈՇԷ գրել առ Տ. Խորէն վարդապետ որ կամ վերադառնայ իւր պաշտօնը շարունակել եւ կամ իւր հրատարակածը մատուցանէ :

6.

Երեսօրօսանական Ընտրութիւնը

Ակնայ եւ Բարերգի վիճակաց մէջ երեսօրօսանական ընտրութիւնը կատարուած եւ Քաղաքական ժողովոյ կողմէ ծանօթագրով հաղորդուած էին Ազգ. ժողովոյ : Ատենապետ էֆէնտին սոյն ընտրութեանց վերաբերեալ գրերը մի առ մի ներկայեց ժողովին , որք ահաւասիկ .

Մանօթագիր Քաղաքական ժողովոյ
Վսեմափայլ Ատենապետ վաշա
Ազգային ժողովոյ

Ակնայ վիճակին երեսօրօսանի ընտրութիւնը կատարուելով , տեղեկագիրը դաւառական ժողովոյ կողմէն հասած է , որոյ համեմատ Ակնայ դաւառական երեսօրօսան ընտրուած է՝

Աւետիս էֆէնտի Պարոնեան :

Նոյնպէս Բարերգի վիճակին երեսօրօսանի ընտրութիւնը կատարուելով , տեղեկագիրը դաւառական ժողովոյ կողմէն հասած է , որոյ համեմատ Բարերգի դաւառական երեսօրօսան ընտրուած է՝

Յովհաննէս էֆէնտի Զիւմրիութեան :

Պատրիարքարանս քննելով ընտրելոց սահմանադրական հանգամանքը՝ Մահմանագրութեան համեմատ գտաւ :

Ուստի սոյն ընտրութեանց տեղեկագրերը ընտրելոց յանձնառութեան գըններուն հետ ներկայելով Ազգ. ժողովոյ , ի պարտ ու պատշաճ անօրէնութիւն ,

Մնամք յարգանք
20 յիւն. 1879 ի գիմաց Քաղ. ժողովոյ
Ատենադպիր Վ. Ատենապետի
Ա. Ալթուն Տիրքի Լ. Պալեօզեան

Տեղեկագիր Գաւառական ժողովոյ
Ակնայ

Գերապատիւ Սրբազան Հայր ,

Ձեր Սրբազնութեան մի գիր , որ Ազգային Կեդրոնական վարչութեան Երեսօրօսանական ժողովոյն համար դաւառէս ալ մի երեսօրօսանի ընտրութիւնը կը հրամայէր , ժամանեց :

Անցեալ Մայիս ամսոյ 31 ին դաւառիս երեսօրօսանական ժողովը՝ որ 23 անդամներէ կը բաղկանայ , 22 անդամոց ներկայութեամբ եւ ընդ նախագահութեամբ նորընտիր առաջնորդ Գեր. Գաւրեղին Մ. վարդապետի Սրբանձառանց , ի ժողով դաւարուելով քուէարկութիւնը՝ եւ անմիջապէս ետքը քուէհամարը կատարուեցաւ , եւ 13 քուէից բացարձակ առաւելութեամբ դաւառիս կողմանէ երեսօրօսան ընտրուեցաւ Մեծ. Աւետիս էֆէնտի Պարոնեան :

Արդ՝ յիշեալ էֆէնտին : որ Ազգ. Մահմանագրութեան պահանջած հանգամանքներն ըստ ամենայնի ունի յանձին , իրրեւ օրինաւոր երեսօրօսան վիճակիս կը ներկայացունեն մը Ձերգ. Գերապատուութեան ի վաւերացումն :

Մնամք Ձեր Սրբազնութեան ամենախոնարհ ծառայք

Ի գիմաց Երեսօր. ժողովոյ Գաւառ. վարչութեան Ակնայ

Առաջնորդական փոխանորդ
Տ. Կրպտ. Քննյ. երեցեան

Ատենադպիր Ատենապետ
Ստեփան Գարակեօզեան Զ. Կ. Ճանիկեան
4 յիւն. 1879
Առաջնորդարան Ակնայ

Յանձնառագիրը քննարկելուց

Գերապատիւ Սրբազան Տէր .

Ներկայ 13 թուականաւ Չերդ Սըրբազանութեան նամակն ընդունելու պատիւն ունեցայ՝ որով Ակնայ վիճակին կողմանէ Ազգային երեսփոխան ըլլալս կը ծանուցանէք և միանգամայն կառաջարկէք իմ յանձնառութիւնս զբաւոր հաղորդել Չերդ :

Սրբազան Տէր, առաջին թէ իբրև ճշմարիտ Հայ և հայրենասէր Ազգին չնչին ծառայութիւն մը մատուցանելու յարմարագոյն ժամանակն հասած կարծելով երկրորդ թէ կրկին անգամ զիս պատուող հայրենակցացս այդ որոշման մերժումն անարժան դատելով կը փութամ ներկայիս ծանուցանել Չերդ իմ յանձնառութիւնս :

Մնամ յաւէտ
16 յուլիս 1879 Ամենախոնարհ որդի
Խասդիւղ Չերդ Սրբազանութեան
Ա. Գ. Պարոնեան

Տեղեկագիր Գաւառական ժողովոյ
Բարերգի

Գերապատիւ Սրբազան եղբայր
Ի Բրիտոսոս

Չերդ Սրբազանութեան յինն ասորիկ գրած նամակը կը հրամայէր վիճակս յերդնկայէ զատուելով զատ երեսփոխանի մը ընտրութիւնը :

Գաւառիս երեսփոխանական ժողովը հաւաքելով զաղանի և քուէից բարձրակ առաւելութեամբ ընտրուեցաւ Ս. Թորոսցի Չիւմրիութեան Յովհաննէս

աղայն, որ ի Պէշիկթաշ տէրութեան ամպար կոչուած տեղն կը բնակի :

Ի Գիմնայ երեսփոխանական ժողովոյ
Նախագահ

Գրիգոր Եպիսկոպոս
Ատենապար Ատենապետ
Պետրոս վրդապետ Փիլիպպոս վրդապետ
14 Մայիս 1879

Բարերգ (Միայն ինչ) :

Յանձնառագիրը քննարկելուց

Գեր Պատրիարքական փոխանորդ
Սրբազան Հայր

Յունիս 12 թուականաւ և 388 համարաւ Չեր Սրբազանութեան մէկ պաշտօնագիրն ընկալաք, որով կը ծանուցանէք մեզ Բարերգի վիճակին կողմէ Ազգային երեսփոխան ընտրուած ըլլալնիս, և մեր նուազութեան յանձնառութիւնը զբաւոր հաղորդել Չեր Սրբազանութեանը :

Արդ՝ Սրբազան Հայր, թէև մեք արժանաւորութիւն չունիմք սոյն բարձր պաշտօնին . բայց յուսալով նախ յԱստուած և երկրորդ յազօթս Սրբազանութեան Չերոյ, ըստ տեղեկագրոյն Գաւառական ընդհանուր ժողովոյն Բարերգի՝ սիրով կընդունիմք յիշեալ ընտրութիւնը :

Մնամ Բարձր Սրբազանութեան
Խ. Ծ.

Մնտախ. Յովհաննէս Զիւմրիւքեան
11 յուլիս 79
Պէշիկթաշ

Սոյն գրութեանց ընթերցումէն ետեւ Ատենապետ էֆէնտին կը հրաւիրէ զերեսփոխանս ի զխտողութիւն՝ Ակնայ վիճակին երեսփոխանական ընտրութեան վրայ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը խնդրեմ որ Ատենապետ էֆէնտին բարեհաճի կրկնել թէ Գաւառական ժողովոյ անդամներէն քանի մասնակցեր են այդ ընտրութեան :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս զրուած է տեղեկագրին մէջ, Ակնայ Գաւառական ժողովը 25 անդամէ կը բաղկանայ, և 22 հոգի քուէ տուեր են :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Շատ աղէկ :

Ուրիշ զխտողութիւն տեղի չունենաով, Ատենապետ էֆէնտին քուէի կը դնէ Ակնայ վիճակի կողմէ կատարուած երեսփոխանական ընտրութիւնն, և ժողովը միաձայն ընդունելով զայն՝ ԿԸ ՎԱԻԵՐԱՅՆԷ և Ազգ. երեսփոխան կը հռչակէ :

Աւետիս էֆէնտի Պարոնեան :

Եւ հետեւապէս Ատենապետ էֆէնտին ժողովոյն զխտողութեան կենթարկէ Բարերգի երեսփոխանական ընտրութիւնը, զիտել տալով թէ նորա տեղեկագիրը ձեռագիր ստորագրութիւն չկրեր և կնքուած է միայն :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կը տեսնեմ որ Բարերգի ընտրութեան տեղեկագրին մէջ չկայ նշանակուած թէ քանի անգամէ կը բաղկանայ տեղոյն Գաւառական ժողովն և անոնցմէ քանի մասնակցեր են այս ընտրութեան, ուստի այդ տեղեկագիրը թերի կը համարիմ քանի որ մանրամասնութենէ զուրկ է, և կառաջարկեմ վերագարձնել զայն առ Գաւառական ժողովն, որ անոր թերին լրացնէ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ես ալ օրինաւոր չեմ գտներ այդ տեղեկագիրը, որ պէտք էր պարունակէր անպատճառ այն քանի մը պարագաները, զորս յիշեց Քախմաճեան էֆէնտին : Ասկէ զատ՝ ուշադրութեան արժանի կէտ մ'է նաեւ որ տեղեկագիրը ստորագրութիւն չկրեր, այլ միայն կնիք զրուած է, որ օրինաւորութեան դէմ է :

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Բարերգի գաւառական ժողովոյ նախագահը, որու կնիքը կայ այդ տեղեկագրին մէջ, այժմ Պօլիս կը գտնուի :

ՊԷՐՊԷՐԵԱՆ Ռ. ԷՖ. — Ես չեմ կարծեր որ Բարերգի գաւառական ժողովոյ անդամոց թիւը՝ տեղեկագրին մէջ յիշատակուած չըլլալը մի զօրաւոր պատճառ կամ իրաւունք ընծայէ մեզ այդ տեղեկագիրը թերի համարելու և մերժելու զայն : Թէ՛ իւրաքանչիւր գաւառական ժողով քանի անգամէ կը բաղկանայ, պէտք է զիտնայ Պատրիարքարանը և զիւրաքանուան ունենայ մի տուճար, ուր արձանագրուած լինին այս ամէնը : Այս տեղեկութիւնը գաւառէն սպասել, երբ իւր երեսփոխանը կընտրէ, պատիւ չբերեր Պատրիարքարանի, իսկ թէ Գաւառական ժողովէն քանի հոգի մասնակցեր է ընտրութեան, պահանջել որ թուով նշանակուած լինի տեղեկագրին մէջ, աւելորդ է նոյնպէս, կը բաւէ որ գաւառական ժողովը յայնանոց է թէ մեծադոյն մասա՞ք ընտրած է զերեսփոխանն, որ կը նշանակէ թէ օրինաւորութեամբ ընտրած է : Սրդ՝ եթէ այս ընտրութեան դործին մէջ պակասութիւն մը կայ, Խարերգի գաւառական ժողովինը չէ, այլ Պատրիարքարանին, որ կանգ զիտանայ անոր անդամոց թիւը :

ՊԱԼԵՕԶԵԱՆ Լ. ԷՖ. — (Յանուն Քաղ. ժողովոյ) Պէրպէրեան էֆէնտին սխալ կըմբռնէ երեսփոխանական ընտրութեանց գործին մէջ Վարչութեան պաշտօնը : Վարչութիւնն ուրիշ որ և է ընկելք գործ ունի, այլ ընտրելոց սահմանադրական հանդամանքն ստուգել և տեղեկագրել : Չայս ըրած է արդէն Վարչութիւնն, և իրեն չպատկանիր ուրիշ մանրամասնութեանց մէջ մտնել : Պէրպէրեան էֆէնտին իրաւունք չունի կնիքադրելու թէ Վարչութիւնը գաւառական ժողովոց կազմութեան վերաբերեալ արձանագրութեան տուճար մ'ունեցած չլինի և չզիտնայ թէ քանի անձէ կը բաղկանայ Խարերգի Գաւառական ժողովը . միայն թէ Վարչութիւնը պարտաւոր

բուժիչն չունի այդ պարագան իւր տեղեկա գրով Ազգ. ժողովին ծանօթութեանը բերել- զան զի, ինչպէս ըսի, իրեն պաշտօն եւ հը- րանանգ տրուած է միայն ընտրելոց սահմանադ- րական հանգամանքն տուողել եւ Արշու- ինն զայդ ըրած է արդէն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Թաղերու մէջ կատարուած երեսօխոսանական ընտրութեանց վրայ ալ նոյն մանրամասն տեղեկութիւնները կը պահանջուին եւ տեղեկագրերն զայդ ամէ- նը կը նշանակեն : Այս կամ այն թաղն քանի ընտրող ունի, Պատրիարքարանը գիտէ, բայց դարձեալ տեղեկագիրը կը յայտնէ անոնց ընդ- հանուր թիւը, ինչպէս նաեւ քուէարկուաց եւ ընտրելոցն առած քուէից թիւը, զի օրի- նաւորութիւնը այսպէս կը պահանջէ : ուստի պէտք է որ մի եւ նոյն ձեւով զայ ներկայա- նայ Բարերգի տեղեկագիրն ալ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Պէրպէրեան է- ֆէնտին իմ զխտողութեանս պատասխանել ուզեց, որ Սահմանադրութեան վրայ հիմնեալ է : Կրնայ պատահիլ որ դաւառական ժողովոյ մէջ 4-5 անձինք միանալով իբր երեսօխոսան մէջը ներկայացնեն . օրէնքը զայս կանխա- տեսելով տրամադրած է որ ընտրական գոր- ծողութեանց մանրամասնութիւնք յիշատակ- ուին տեղեկագրին մէջ . ուստի Պէրպէրեան էֆէնտի բացատրութիւնը դոհացուցիչ չեմ գտներ : Իսկ գալով Պալեստինայի էֆէնտի զի- տողութեանց շատ ճիշտ է եւ օրինական :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ. ԷՑ. — Գաւառական ժո- ղողներն ճիւղերն են կեդրոնական Արշու- թեան, եւ անհրաժեշտ է որ Պատրիարքարա- նի մէջ արձանագրեալ լինի իւրաքանչիւր ժո- ղովոյ անդամոց թիւն եւ թէ անուններն : Շատ պարագաներու մէջ այս տեղեկութիւնը հար- կաւոր կրնայ լինիլ, նոյն իսկ այս երեսօխոսա- նական ընտրութեան խնդրոյն մէջ նմադրե- լով որ Արշու-թիւնը պարտաւոր չլինի ընտ- րելոց սահմանադրական հանգամանքը քննելէ

զատ՝ ուրիշ որ եւ է քննութիւն ընելու կամ տեղեկութիւն բերելու, երբ Ազգ. ժողովը ու- ղէ գիտնալ թէ քանի անդամէ կը բաղկանայ Բարերգի դաւառական ժողովը, Արշու-թիւնը պէտք է պատասխանէ : Գայով Քրիստոստուր էֆէնտի առարկութեան՝ դաւառներու ե- րեսօխոսանական ընտրութիւնը չեն նմանիր թա- ղերու ընտրութեանց, ընտրելոց թիւը թաղե- րու մէջ յարափոփոխ վիճակի մէջ է, թէ կը նուազի. եւ թէ կաւելնայ, ուստի երբ պահան- ջուի թաղերէն որ ընտրողաց թիւը նշանակեն, կմրոնեմ ասոր նշանակութիւնը, բայց ինչ հարկ նոյնը դաւառներէն ալ պահանջելու, քանի որ ժողովոց անդամներուն թիւը սահմանեալ է, եւ անփոփոխ եւ Պատրիարքարանը զայն կըր- նայ գիտնալ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Կը տեսնեմ որ խնդի- րը թիւրիմացութեամբ կը շփոթի, եւ հարկ կըլայ պարզել զայն : Արշու-թիւնը չըսու թէ ինք չգիտէ դաւառական ժողովոյ անդամոց թիւն, եւ թէ անկարող է տեղեկութիւն տալ այդ մասին . այլ առարկեց թէ իւր պարտաւո- րութիւնն է միայն ընտրելոց սահմանադրա- կան հանգամանքը քննել եւ տեղեկագրել : Պէր- պէրեան էֆէնտին սխալ հասկըցաւ այս կէտը : Արշու-թեան առարկութիւնն իրաւացի է, Պէրպէրեան էֆէնտի չգիտէ թերեւս թէ՝ ե- րեսօխոսանական ընտրութեանց մէջ՝ նախորդ որոշմամբ մը պաշտօն տրուած է Արշու- թեան միայն ընտրելոց հանգամանքն ստուգել եւ ծանօթագրել : Իսկ թէ ընտրական գործո- ղութիւնք օրինաւոր եղանակաւ կատարուած են թէ ոչ՝ Ազգ. ժողովն իրեն վերապահած է քննել գտնոնք . եւ այս քննութեան մէջ օ- րէն է վնասել այն մանրամասնութիւնքը՝ զորս յիշեց Քաթամաճեան էֆէնտին :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Խօսք կուղեմ, Պէրպէրեան էֆէնտիին պատասխանելու հա- մար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Չեմ կրնար տալ : Թ- րէնքին թոյլատրած չափով խօսեցաք արդէն խնդրոյն վրայ, եւ հարկ ալ չեմ տեսներ այս

վիճարանութիւնն աւելի յառաջ մղելու, զի խնդիրը պարզուեցաւ . ժողովին պիտի հար- ցնեմ այժմ թէ՝ օրինաւոր կը դատի՞ արդեօք Բարերգի երեսօխոսանական տեղեկագիրը, թէ ոչ՝ թերի գտնելով պատշաճ կը դատի վերա- դարձնել զայն առ դաւառական ժողովն, որ- պէս զի սորա թերին լրացնէ :

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին խըն- դիրը քուէի կը դնէ, եւ ժողովը մեծագոյն մասամբ թերի գտնելով Բարերգի ընտրութեան տեղեկագիրը ԿՈՐՈՇԷ՝ ըստ առաջարկութեան Քաթամաճեան էֆէնտի՝ վերադարձնել զայն առ Գաւառական ժողովն, անոր թերին լրա- ցնելու համար :

6.

Ղալաթիոյ բաղեցւոց ոմանց աղերսագիրը

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ղալաթիոյ թաղեց- ւոց ոմանց կողմէ աղերսագիր մը կայ ժողովին ուղղեալ, որով կը խնդրեն որ Ղալաթիոյ թա- ղային ընտրութեան իրաւանց մասին իրենց մատուցած նախորդ խնդրագրոց նկատմամբ ժողովին տուած որոշումը հազորդուի իրենց : Այս խնդիրը Մայր դիւանին կողմէ խնայա- սիրեալ մնացորդ խնդրոց մէջ է արդէն, եւ Մայր դիւանի տեղեկագիրը խնդրոց կարգն անցած ըլլալով, այս ալ պիտի ներկայանայ ի դէպ ժամուսն ժողովոյ որոշմանը . ուստի զայն նոր խնդիր նկատելու կամ նոր գործողութիւն մը ընելու հարկ չկայ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Ես զիս քանի գիտեմ այս թաղային խնդիրը կայ ժողովին մէջ, որ քանի մ'անդամներ նախաքննութիւն- ներէ անցած, սակայն ցարդ չէ կրցած լուծու- մ'ընդունիլ եւ կը զարմանաւ թէ ինչպէս այս- քան կը յետաձգուի այս խնդիրն, որ սահմա- նադրական իրաւանց խնդիր մ'է, եւ կառա-

ջարկեմ որ յարաբերութեան դիւանին յղուի, սա պայմանաւ որ մինչեւ 15 օր իւր տեղեկա- գիրը մատուցանէ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Ինչպէս ըսաւ Ատե- նապետ էֆէնտին, 57 անլոյժ խնդրոց մըայ Մայր դիւանի կողմանէ պատրաստեալ տեղե- կագիրը որուն մէջն է նաեւ այս խնդիրը՝ եզ- րակացութեամբ մը կնքեալ, խնդրոց կարգն է արդէն . բայց եթէ ժողովը ստիպողութիւն ու- ղէ ընծայել այս հինաւուրց խնդրոյն որ թա- ղային իրաւանց խնդիր մ'է, օրակարգը կանց- նի անտի, եւ աւելի արագ կը հասնի լուծ- ման :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՑ. — Ըստ կանոնի որ եւ է աղերսագիր մինչեւ երեք ամիս պայմա- նաժամ ունի ելք գտնելու համար . բայց երբ այդ երեք ամիսն երեք տարի հասկցուի, ա- նհրաւութիւն գործուած կըլլայ : Ղալաթիացիք պէտք է իրենց խնդրագրոյն պատասխանն ըս- տանան, ուստի Ատենապետ էֆէնտի զխտո- ղութեան համաձայն ստիպողութիւն տալու է խնդրոյն, եւ շուտով լուծել զայն :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՑ. — Կառաջարկեմ որ այս խնդիրը քննող Նախաձեռնութեան դի- ւանը իւր տեղեկագիրը տայ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Քիչ մ'աւելի ըն- դարձակօրէն բացատրեմ խնդիրը : Ղալաթիոյ թաղեցիք առաջին անգամ աղերսագիր մը տուած են ժողովիս որ ի սկզբան յարաբերու- թեան դիւանին յուղարկուեր էր, բայց սա- տասխանը չէր եկած եւ այսպէս անլոյժ խնդ- րոց մինն էր դարձեր . որ Մայր դիւանի յանձ- նարարեալ խնդրոց մէջ գտնուելով, այն ալ քննութեան առնուեր է Մայր դիւանի կողմէ եւ իւր տեղեկագրին մէջ անցեր է : Ղալա- թիացիք երկրորդ աղերսագիր մ'ալ տուեր են, որ անցեալ տարի Նախաձեռնութեան դիւանին յղուեր էր ի նախաքննութիւն, եւ նորէն անլոյժ մնալով ներկայ չըջանի Նախաձեռնութեան դիւանին թողուեր էր իւր նախորդէն . բայց Նա-

խաձեռնութեան զիւանը տեսնելով որ Ղալաթիացւոց խնդիրն արդէն Մայր զիւանի կողմէ քննուած եւ տեղեկագրուած է առ ժողովը, ինքն բան մը չէ ըրեր այն մասին: Արդ եթէ ժողովը կուզէ ստիպողութիւն տալ խնդրոյն, որ արդէն խնդրոց կարգին մէջ է, կանցնի օրակարգն:

ԶԱՅՆԵՐ. — Այո, այո:

Հետեւապէս ժողովն ըստ առաջարկութեան Ատենադպիր էֆէնտինն ընդհանուր հաւանութեամբ ԿՈՐՈՇԷ օրակարգն անցընել Ղալաթիոյ թաղեցւոց խնդիրը:

7.

Նախաքննիչ զիւանաց ատենապետք

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դիւանը պահ մը առաջ տեղեկութիւն ընդունեց որ Դաստիարակութեան զիւանն ատենապետ ընտրեր է իրեն՝ Սէրգիէն էֆէնտին: Կը յուսամ որ միւս զիւաններն ալ շնորհ կընեն իրենց ատենապետներն ընտրել, որոնց ընտրութիւնք, ինչպէս որ սկզբան յայտարարեցի ստիպողական է յոյժ, Քաղաքական ժողովոյ ընտրելեաց զեղչելի ցանկը պատրաստելու համար:

8.

Բարենորոգմանց Խորհրդարանական Յանձնախմբին հրաժարագիրը

Սոյն Յանձնախմբին կողմէ ուղղեալ յետադայ հրաժարագիրը կարդացուեցաւ:

Վսեմապատիւ Ատենապետ

Ազգային ժողովոյ

Բարենորոգմանց Խորհրդարանական Յանձնախումբս շնորհատարաւ մնալով ժողովէդ ընդ միշտ տեսած վստահութեան համար, հարկ կզգայ կրկնել և այսօր իր հրաժարականը, վասն զի իւր պաշտօնին բացառիկ պահանջմանց առջև անբաւական կզտնէ զինքն այլ ևս զայն ըստ արժանւոյն վարելու:

Ուստի ստորագրեալքս, անդամք նոյն յանձնախմբի, թախանձանօք կաղաչեմք միահամուռ զՊատկառելի ժողովդոր բարեհաճի ընդունիլ մեր հրաժեշտն և զայլ ձեռնհաս անձինս կարգել մեր տեղ

Մնամք մեր սիրելի Ազգին: Խորհրդ. Ղլթյ. անձնուէր

20 յուլիս 79 Մատրեոս Եպս. Իգմիրլեան Ներսէս վրդպտ. Աղաճեան Մերեմ-Գուլի Ա. Ալրուց Տիարրի Լ. Պալեօգեան Ս. Պ. Պ. Փախագեան

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Սոյն խնդիրն ժողովոյ նկատողութեան և նթարկեալ պահուն պատշաճ չէ որ մնամ ատենապետի աթոռին վրայ, վասն զի թէ անդամ եմ բարենորոգմանց Յանձնախմբին եւ թէ մրանդամայն տեղեկագրերը: Ուստի կը խնդրեմ որ շնորհ ընէ ժողովն առժամեայ ատենապետ մը նշանակել իմ տեղս, որպէս զի աթոռէն իջնեմ:

ՊԷՅԼԻԿՃԵԱՆ Ս. ԷՖ. — Թէ իջնաք՝ թէ ոչ, հրաժարականնիդ ընդունող չկայ, ուստի ընդունայն մի յոգնիք իջնելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Բայց այս կերպով խնդիրը լուծուի չառնուր, ուստի պէտք է անպատճառ ուրիշ ատենապետ մը ցոյց տալ: Վասն զի կրնայ պատահիլ որ հարկ լինի ինձ խնդրոյն վրայ խօսք առնուլ:

Ժողովը Ղաղարոսեան Գրխտոտուր էֆէնտինն իբր երկրագոյն՝ Ատենապետ կը նշանակէ, հետեւապէս Ատենապետ էֆէնտինն թողով իւր աթոռը, Ղաղարոսեան էֆէնտինն կանցնի անոր տեղ Սրբազան Նախագահին հրաւիրանօք, եւ կը հրաւիրէ զերեսփոխանս խօսք առնուլ սոյն հրաժարականի խնդրոյն վրայ:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Կուղեմ նախապէս գիտնալ թէ ժողովն օրինական մեծամասնութիւն ունի թէ ոչ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — (Ներկայութեան տուժարը քննելով) Ներկայից թիւն 37 է այս պահուս:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ուրեմն նիստն անբաւական է, եւ այս խնդիրն յառաջիկային կը մնայ:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Խնդիրն որոշման յանգաժ ատեն մեծագոյն մաս կը փնտռուի, իսկ վիճարանութեան դրուած միջոցին չեմ կարծեր որ հարկ ըլլայ անպատճառ՝ մեծագոյն մասի ներկայութիւն խնդրելու:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Դիտողութեան արժանի պարագայ մ'ալ այս է որ ատենապետն գործողութեանց համար ժամ մը միայն սահմանուած է, եւ այս պայմանաւոր լրացաւ ցարդ:

ՄԷՐԵՆԵՄ-ԳՈՒԼԻ Յ. ԷՖ. — (Յանուն Յանձնախմբին) ժողովին մեծամասնութիւն չունենալը արգելք մը չէ այս խնդիրն լսելու համար: Վերջին դանիակ նիստին մէջ ալ ժողովն առանց հիմնապէս նկատողութեան առնելու Յանձնախմբին հրաժեշտն՝ չուզեց ընդունիլ զայն, բայց ահաւասիկ կը տեսնէք որ Յանձնախումբը հարկադրուեցաւ իւր հրաժարականը կրկնելու: ուստի կաղաչեմ որ ազգայնութեան առնուք խնդիրն եւ նոր Յանձնախմբին ընտրութիւնը փութացնէք:

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ. ԷՖ. — Ժողովը Յանձնախումբին փափուկ պաշտօն մը տուած է իւր մեծագոյն մասովը, եւ չէ կարելի այժմ անմեծամասն նիստի մէջ այս խնդիրը լուծել եւ անոր հրաժեշտն ընդունիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Արդարեւ անբաւական նիստի մէջ, ուր միայն որոշող մասին ներկայութիւնը կայ, ներելի չէ ըստ կանոնի ոչ օրակարգէն դուրս խնդիր որոշել, եւ ոչ իսկ վիճարանութիւնը փակել, եթէ խնդիրն յուզուի: Բայց ըստ որում Յանձնախումբի անդամք տրամադիր չեն իրենց հրաժարականն եւ առնելու, որպէս զի առանց խնդրի ըլլալու վերջ գտնէ գործը՝ լաւագոյն է զայն օրակարգն անցունել, յաջորդ նիստին մէջ լուծելու համար:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Կարծիքները տարբեր են այս մասին, եւ հարկ կըլլայ ժողովին հարցընել թէ կուզէ այսօրու ընէ վիճարանութիւնը սկսիլ սոյն հրաժարականի խնդրոյն վրայ, թէ ոչ պատշաճ կը դատի յառաջիկայ նիստի օրակարգն անցնել զայն:

Եւ Ատենապետ էֆէնտինն այս ձեւով խնդիրն քուէի կը դնէ, եւ ժողովը մեծագոյն մասաւր ԿՈՐՈՇԷ Յանձնախումբին հրաժեշտի խնդիրն յառաջիկայ նիստին օրակարգն անցընել, պայմանաւ որ Յանձնախումբը շարունակէ վարել իւր պաշտօնը մինչեւ ցլուծուին հրաժարականի խնդրոյն:

ՆՈՒԱԳԱՀ ՍՐԲԱՋԱՆ. — Միջանկեալ տեղեկութիւն մը կուզեմ հաղորդել ձեզ: Կը միջէք որ նախընթաց նիստի մը մէջ ժողովը յանձնարարած էր ինձ երկու նորընտիր երեսփոխանաց, Ղաղարոսեան Սահակ եւ Գալաֆեան Յովսէփ էֆէնտիններու հետ, որ հրաժեշտ տուած էին պաշտօնէ, բանակցիլ եւ յորդոր կարգալ իրենց՝ որ յանձն առնուին զայն: Փութացի կատարել ժողովիդ յանձնարարութիւնն եւ անոնց հետ տեսակցելով պէտք եղած յորդորն ըրի, սակայն անդամագրելի պատճառներ մէջ բերելով պնդեցին ցվերջ իրենց հրա-

ժարականին վրայ, եւ այն ասան հարկադրուեցայ ըստ հրահանգի ժողովոյդ՝ նոր ընտրութեան հրահանգ յուղարկել Սամաթիոյ եւ Պայտու թաղերուն, որ ընտրած էին զանոնք:

ՁԱՅՆԵՐ. — Շատ աղէկ, շատ աղէկ:

Այս պահուս Ղազարոսեան Բրիտանոստոյ էֆէնտին ատենապետի աթոռը թողլով Ատենապետ Մէրեթ-Պուլի էֆէնտին կանցնի պաշտօնին գլուխը, եւ ատենական զործողութիւնք վերջացած լինելով ձեռք կառնու Օրակարգը:

Օ Ր Ա Կ Ա Ր Ք

Տեղեկագիր Համարակալութեան ղիւանի ի վերայ ուղղակի տրոց:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Ինչպէս կը յիշէք կեդրոնական ուղղակի տրոց վրայ Աղգային Աարչութիւնը կանոնաց ծրագիր մը բերած էր ասկէ առաջ, որ ժողովին կողմէ Համարակալութեան ղիւանին յանձնուած էր ի նախաքննութիւն: Սոյն ղիւանը պէտք եղած քննութիւնը կատարելով իւր տեղեկագիրը մատուցած է, որ եւ Ն. նիտտի ատենագրութեան մէջ անցած է կանոնաց ծրագրին հետ: Կարգացիք անշուշտ երկուքն ալ եւ տեսաք որ Համարակալութեան ղիւանն ընդունելի գտնելով լիւրացնէ ծրագրին ի բաց առեալ միայն յօդուածոց մին, որու վրայ գիտողութիւն մը յառաջ կը բերէ: Գիտէք որ ըստ կանոնի ամէն օրինական ծրագիր երեք օրոշումէ կանցնի, եւ առաջին քուէն կը տրուի միայն ծրագրին ընդհանրութեան վրայ, հետեւ տրար նախ բայց անշուշտ ոչ այժմ:

ընդհանրութիւնը կառնուի նկատողութեան, եւ նիւթ կընծայէ վիճարանութեան: Արդ՝ ծրագրին ընդհանրութեան վրայ կը բանամ վիճարանութիւնը, եւ կը հրաւիրեմ նախ Յանձնախմբին տեղեկարբերը, որ եթէ ունի բերանացի բացատրութիւն կամ տեղեկագրէն դուրս լոյս մը ժողովին տալու, հաճի խօսք առնուլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարբեր Համարակալութեան ղիւանի) Համարակալութեան ղիւանն ուշի ուշով քննեց Աարչութեան բերած ուղղակի տրոց ծրագրին եւ զայն ընդունելութեան արժանի հանդամանաց մէջ գտնելով լիւրացուց, ի բաց թողլով միայն 9 րդ. յօդուածն, որ տուգանք մը կը տրամադրէր վճարելի՝ յապաղմանց համար: Թէ ինչո՞ւ ղիւանն այդ յօդուածը չուղեց ընդունիլ, բացատրեմ. նախ՝ վասն զի արդէն 10 րդ. յօդուածը կը պահանջէր որ յապաղեալ տրոց հաշիւ ունեցող ազգային անհատը՝ երբ քաղաքական գործոյ մը համար ղիմէ ի Պատրիարքարան կամ Առաջնորդարան եւ կամ ի Թաղական Խորհրդարան, նախ իւր տուրքը վճարելու հարկադրեալ լինի, յորմէ ետեւ անշուշտ պիտի տեսնուի իւր գործը: Համարակալութեան ղիւանը կանոնին այս տրամադրութիւնը բաւական տուգանք մը համարեց եւ հարկեցուցիչ պատճառ՝ յետեւեալ տրոց հաշիւները մաքրելու, ուստի չուղեց 9 րդ. յօդուածով այդ տուգանքը սահմանել: Երկրորդ՝ ղիւանը յիշեց որ զարձեալ այս ժողովին մէջ ուրիշ անգամ ուղղակի տրոց կանոնաց ծրագիր մ'եկած էր, որ զարձեալ ներկային նման ունէր իւր մէջ տրամադրութիւն մը տուգանաց վերաբերեալ, վճարումներու յապաղմանց համար, այլ սակայն Աղգ. ժողովն գոհունակ աչաք չնայեցու այն ատեն այդ յօդուածին վրայ, եւ վտարեց ի բաց վերջապէս: Աղգ. ժողովոյ այս տրամադրութիւնն՝ միանալով ղիւանին նկատման հետ, զօրաւոր պատճառ մ'աղաւ այդ 9 րդ. յօդուածը մերժելու: Այս վերջին պարագային վրայ աւելի տեղեկութիւն քաղելու համար՝ կրնանք հին ատենագրութիւնները բանալ, որոնցմէ զմեզ հետեւեալ տրոց անշուշտ ոչ այժմ:

ընդհանրութիւնն է՝ առ ժամս նիւթ վիճարանութեան, այլ երբ կարգը գայ այն յօդուածին, որու բարձու մն ուղեց Համարակալութեան ղիւանը: Ծրագրին ընդհանրութեան վրայ ուրիշ մասնաւոր ըսելիք մը չկայ, բայց Գիւանը պատրաստ է՝ երբ բացատրութիւններ ուղղութիւն վրայ այժմ եւ թէ յօդուածոց քննութեան պահուն, մատուցանել ձեզ լիովին, եւ ժողովը լուսաւորել:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Ժողովն իսկական մեծամասնութիւն չունի, որոշող ձայնից միաբանութիւնն ալ չեմ կարծեր որ յաջողիցք գտնել, մասնաւոր ծրագրին յօդուած առ յօդուած որոշումէ անցնելու ատեն, հետեւապէս հարկ կըլլայ նիստը փակել:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Առ այժմ չենք գիտեր թէ ինչ էլք պիտի ունենայ. մենք ըստ կանոնի կատարել կսկսինք մեր աշխատութիւնն, եւ երբ գործը հոն հասնի որ չկարենանք յառաջ մղել, կանգ կառնուինք հոն, ուր կանոնը մեզ կը հրամայէ կենալ: Հիմա վիճարանութիւնը ծրագրին ընդհանրութեանը վրայ է, խօսք ուղող կայ արդեօք:

ՔԱՎՈՒՔՃԵԱՆ Ս. ԷՖ. — Կը տեսնեմ որ այդ ծրագրին մէջ կեդրոնական եւ թաղական տուրքերը միացեալ են եւ պիտի հաւաքուին թաղական խորհրդոց ձեռք: Սակայն արդէն թաղային ուրիշ զանազան տուրքեր կան, իլ-մուխապէրի հասոյթ եւլն. իսկ հիմայ որ այդ թաղային տուրքը կը հաստատուի, միւս տուրքերը պիտի չնշուին արդեօք: Եթէ մեան, շատ դժուար պիտի լինի զատ զատ այսքան բազմազան տուրքեր հաւաքել. ուստի դժուարութեանց տեղի չտալու համար լուսաւորն է մէկ ձեւի մը ներքեւ այդ ամէն տուրքերը միացնել եւ օրինաւոր կերպով հաւաքել:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — (Տեղեկարբեր Համարակալութեան ղիւանի) Ամէն Հայ որ չափահաս է եւ վաստակի տէր, պարտաւոր է ազգին ծախուց մասնակցել, եւ տուրք մը վրձարել, առանց փոխարինի, միմիայն ազգին

մէկ անհատն ըլլալուն համար, եւ ահա այս է որ ուղղակի տուրք կը կոչուի: Իսկ այն որ գործ մը կունենայ, իլմուխապէր մը, վաւերացում մը եւալն կը խնդրէ, իբրեւ փոխարինութիւն՝ տուրք մը կը վճարէ, որ կանուանի անուղղակի տուրք: Ահաւասիկ այդ երկու տեսակ տրոց մէջ եղած տարբերութիւնը, որ զիրար չեն ջնջեր:

ՔԱՎՈՒՔՃԵԱՆ Ս. ԷՖ. — Բայց իմ գիտողութիւնս փորձառութեան վրայ հիմնեալ է. թաղային նոր տուրք մ'ալ աւելնալը դժուարութիւն պիտի պատճառէ միւս տուրքերը հաւաքելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Համարակալութեան ղիւանը պէտք եղած բացատրութիւնը տուաւ այդ երկու տեսակ տրոց բնութեան վրայ սակայն կերեւի թէ, Գալուքճեան էֆէնտին, դուք նոր առաջարկութիւն մ'ընել կուղէք, որուն կարգը չէ հիմայ եւ պէտք է զայն գրաւոր ներկայէք, կաղաչեմ որ այժմ ծրագրին ընդհանրութեան վրայ ամփոփէք ձեր ուղղութիւնն եւ խորհրդակցութիւնները:

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՖ. — Իբր անգամ Համարակալութեան ղիւանի ստորագրած եմ տեղեկագիրը, բայց չեմ ընդունած այն երկու մասնաւոր տրամադրութիւններն որ Քանչլէրի եւ մուգաթայի տրոց բարձուը կենթադրեն. եւ այս պայմանն նշանակած եմ ստորագրութեանս քով:

Ծրագրին ընդհանրութեան վրայ ուրիշ գիտողութիւն տեղի չունենար, եւ Ատենապետ էֆէնտին քուէի ղնելով զայն՝ միայն 2(1) ձեռք կամբառնան. ծրագրին ընդունելութեան համար, հետեւաբար Ատենապետ էֆէնտին հակախորձը կընդհատէ, յարելով թէ 24 օրոշող ձայնից միաբանութիւն չգոյնաւորեքուէ արկութեան փորձն ի դերեւ ելած է, եւ ղիւանն ստիպուած է ըստ կանոնի ատենադիակելու:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Շատ վստահ չեմ

քուէները ճշդիւ համուած ըլլալուն վրայ որով այս փորձը տարակայսի ներքեւ կը մնայ ուստի կը խնդրեմ Ատենայեալ էֆէնտիին որ հաճի կրկնել զայն :

ՁԱՅՆԵՐ . — Ա յո՛ւ , այո՛ :

Հետեւարար Ատենայեալ էֆէնտին կը կրկնէ քուէարկութեան փորձը , եւ ժողովը 24 որոշող ձայնից միարանութեամբ կ'ընդունի ուղղակի տրոց ծրագրին ամբողջութիւնն , եւ կանցնի յօղուածոց քննութեանը :

Յօդ . 1 Ազգային ուղղակի տուրքն երկու տեսակ է , կեդրոնական եւ Թաղական :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Ժողովին կը յիշեցրեմ որ մինչեւ ցարդ Թաղական տրոց համար որէնք մը քուէարկուած չէր , եւ այս անգամ կեդրոնական տրոց հետ միանալով միեւնոյն օրինաց տակ կը դրուի :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ . ԷՖ . — Եթէ չեմ սխալիր , ժողովս ասկէ առաջ կեդրոնական տրոց մի որի՛նք ծրագիր քուէարկած է , որ ցարդ զործագրութեան մէջ է : Արդ Վարչութիւնն կեդրոնական տրոց մի որի՛նք ծրագիր , բաշխման եւ հաւաքման մի այլ եղանակ կը ներկայէ մեզ , առանց բացատրելու մեզ այն պէտքերն եւ պատճառներն որք կառաջնորդեն զինքն նախորդ գրութիւնն թողելու , եւ նոր մ'ընդունելու : Չայս պարտ էր ընել տեղեկագրի մը մէջ , որոյ ընկերայնելու էր իւր ծրագրին , վասն զի ինչպէս որ կը տրամագրէ նաեւ ներքին կանոնագրի Երդ . յօդուածն , Վարչութեան կողմէ ներկայացեալ օրինական ծրագիր կամ առաջարկ պէտք է որ պատճառարաննալ լինի . եւ հոս այս այնչափ աւելի կարեւոր է , որչափ մի հին գրութիւն կայ , զոր կը թողունք եւ մի նոր կրնդունինք , Վարչութիւնը պէտք էր որ բացատրէր մեզ թէ ինչ են հոյն թերութիւնները , եւ նորոյն առաւելութիւններն , եւ թէ ինչ պէտքեր եւ նկատումներ կատարեն զինքը մի այսպիսի ծրագիր յօրինելը Այժմ մենք մտիկ եւ սնըս-

տուգութեան մէջ ենք , բաղդատութեան միջոցներ կը պակսին մեզ , եւ խնդրոյն վրայ լուսաւորուած չենք : Այս թերութիւն է գործուած Վարչութեան կողմէ : Նախօրինակ թերութեան մէջ գտնուած է նաեւ Համարակալութեան դիւանը : Դիւաններու պարտաւորութիւնն է , կարծեմ , ժողովոյն գործերը զիւրել , ներկայացեալ խնդիրներն նախաքննել , սերտել , պարզել , եւ յետոյ լուսաբանեալ բերել ժողովոյս : Բայց Համարակալութեան դիւանի տեղեկագրին մէջ լուսաբանութիւններ եւ ուսումնասիրութիւններ չենք տեսներ , այլ վճիռ , այլ պատգամ . դիւաններն իշխանութիւն չեն , այլ քննող , ուսումնասիրող մասնախումբեր : Խնդիրն այս վիճակի մէջ , ուր որ էր՝ հոն է միշտ , եւ մեզ հարկ է վերստին քննել զայն , Համարակալութեան դիւանն իւր պարտքն լաւ չէ հասկըցած ու կատարած : Ծրագրոյն ներկայացման մէջ տեղի ունեցած այս երկու թերութիւնները ժողովոյս ուշադրութեան կը յանձնեմ :

ՔԱՓԱՄԱՃԵԱՆ Մ . ԷՖ . — Շատ իրաւացի են այս դիտողութիւնները :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — Քիչ մ'ուշ մնաց Պէրպէրեան էֆէնտին այս դիտողութիւններն ընելու համար , որոնք կրնային մէջ բերուիլ , երբ խնդիրը ծրագրին ընդհանրութեանը վրայ էր , բայց հիմայ յօղուածոց վրայ բացուած է վիճարանութիւնը . ուստի այս դիտողութիւններն որքան ալ իրաւացի եղած ըլլան , անժամանակ են , եւ ըստ այնմ չեն կրնար արդիւնք մ'ունենալ :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս . ԷՖ . — (Տեղեկարար Համարակալութեան դիւանի) Պէրպէրեան էֆէնտին իրաւունք ունի իւր անձին եւ նորընտիր երեսօտիսանաց համար այսպիսի խնդիր մը յառուցանելու , բայց ժողովին համար ոչ , վասն զի ինք այս խնդրոց վրայ տեղեկութիւն չունենալուն մասնախումբութիւն կը վճատէ , իսկ ժողովը տեղեկ է ամենայնի . ուստի Համարակալութեան դիւանը հարկ չէ տեսնած իւր տեղեկագիրը ծանրաբեռնել ճզճիմ մանրուստ :

նութիւններով , բայց պատրաստ է , ինչպէս այտարարեցի արդէն , ինչ տեղեկութիւն եւ բացատրութիւն որ պահանջուի մատուցանել լիովին :

Վարչութիւնն ասկէ վեց ամիս առաջ ելմտացոյց մ'եւ ուղղակի տրոց կանոնագրի ծրագիր մը բերաւ արդէն , որոնց հետ կար ընդարձակ տեղեկագիր մը , որ մէն մի ճիւղի ծախուց եւ հաստից վրայ՝ երկարօրէն կը խօսէր , եւ կը լուսաւորէր զանոնք : Այդ ելմտացոյցն եւ տրոց կանոնագրի ծրագիրը Համարակալութեան դիւանին յղուելով այն ատեն՝ որու տեղեկագրին էր Արչակ էֆէնտին , նա եւս իւր կողմէ մանրամասն տեղեկագիր մը բերաւ : Ժողովն ելմտացոյցի ծախուց մասը քուէարկած էր արդէն՝ եւր կեդրոնական անտուկի հասոյթն եւ ծախքն արծաթ դրամի վերածել առաջարկուեցաւ եւ ըստ որում ժողովին փակու՛մը վրայ հասած էր , այն ատեն ժողովը՝ վերադարձուց ելմտացոյցն Վարչութեան որ արծաթ դրամի վրայ հիմնել զայն , եւ հետագօտելով ուղղակի տրոց նկատմամբ յայտնուած կարծիքները , նոր ծրագիր մը բերէ . ահա այդ սրբազրեալ ելմտացոյցն եւ ծրագիրն , ինչպէս գիտէք , եկան հետզհետէ ժողովին , զորս Համարակալութեան դիւանը քննեց , եւ ըստ որում խնդիրներն արդէն լուսաբանուած էին , եւ յուզուած ժողովին մէջ , նախորդ Համարակալութեան դիւանին քննութեան բովէն անցնելով , եւ Վարչութիւնն ալ ի նկատի առնելով զանոնք , ըստ այնմ պատրաստած է : նոր ելմտացոյցը եւ կանոնագիրը , Համարակալութեան դիւանս ալ արժան դատեց զանոնք գրեթէ ամբողջովն ընդունիլ եւ իւրացնել , ուստի եւ մանրամասն տեղեկագիր բերելու հարկ չտեսաւ : Երբ Պէրպէրեան էֆէնտին բարեհաճի աչքէ անցնելու միտնգամ ատենագրութիւններն այն նկատելու , ո՛ւր յուզուեր են այս խնդիրներն , կը գտնէ իւր դիտողութեանց պատասխանն անոնց մէջ : Իսկ հիմա խնդիրն առաջին յօղուածին վրայ է , որ կըսէ թէ երկու տեսակ է ազգային տուրքը , կեդրոնական եւ Թաղական , ինչպէս կը տրամագրէ Ասանանագրութիւնը : Այս յօղուածին

վրայ ինչ կրնանք ըսել . քանի որ Ասանանագրութեան մէկ տրամագրութիւնը կամփոփէ , ուստի կառաջարկեմ քուէարկել զայն եւ անցնիլ յաջորդին :

ՊԵՐՊԵՐԵԱՆ Ռ . ԷՖ . — Բայց Քաղ . ժողովը լուռ է իմ դիտողութեանց առջեւ , եւ Համարակալութեան դիւանին ըսածները չը հաստատեր :

ՊԱԼԵՕՋԵԱՆ Լ . ԷՖ . — (Անգամ Քաղ . ժողովոյ) Պէրպէրեան էֆէնտի կուզէ որ Քաղաքական ժողովը պատասխանէ իրեն դիտողութեանց : Քաղաքական ժողովը լուռ կեցաւ ցարդ , վասն զի կը կարծէր թէ Համարակալութեան դիւանի բացատրութիւնները բաւական էին համոզում գոյացնելու եւ հարկ չէին թողած մեզ երկարօրէն պատասխանելու Պէրպէրեան էֆէնտիի դիտողութեանց :

Փորձը ցոյց տուած էր արդէն թէ ուղղակի տրոց բաշխման եւ հաւաքման նախորդ գրութիւնն անգործագրելի էր , եւ հարկ անհրաժեշտ զայն բարեփոխել : Եւ ըստ որում՝ ինչպէս ըսուեցաւ , լուսաբանուած խնդիր մ'էր այս ժողովին համար , առանց տեղեկագրի , միայն նոր կանոնաց ծրագիրը բերինք . զոր Համարակալութեան դիւանն ընդգրկելով՝ լուսաբացուց . բացի մէկ կէտէ մը . չգտնելով ուրիշ ինչ մերժելի : Երեսօտիսանք պիտի քննեն զայն այժմ , եւ երբ որ եւ է կէտի վրայ տեղեկութիւն տալ պէտք լինի , Քաղաքական ժողովը պատրաստ է միշտ զայն մատուցանելու :

ՊԵՐՊԵՐԵԱՆ ԷՖ . — Համարակալութեան դիւանին եւ Վարչութեան բացատրութիւնք պատասխան չեն իմ խօսքերուն եւ զիս չեն գոհացնիր . . .

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ . — (Ընդմիջելով) Ձեր դիտողութիւնները , Պէրպէրեան էֆէնտի , ծրագրին ընդհանրութեան կը վերաբերին , զոր ժողովը քուէարկեց եւ ընդունեց պահ մ'առաջ , եւ ինչպէս գիտեի տուի ձեզ , ատոնց ատենն անցաւ . եւ այժմ ժողովը ծա-

մալաճառ ընելու կը ծառայեն միայն, Ինչպէս տեսաք, Համարակալութեան դիւանն եւ Վարչութիւնը ձեզ պատասխանելու համար խօսք առին, զոր պարտաւոր էի տալ, քանի որ դուք արդէն խօսած էիք, բայց ըստ որում այս ամենն ոչինչ օգուտ պիտի արտադրեն, ներելի չէ խնդիրն ասկէ աւելի երկարել, ուստի չեմ կարող նորէն խօսք տալ ձեզ:

Պէրպէրեան էֆէնտին՝ դարձեալ կը պնդէ խօսք առնուլ, եւ Ատենապետ էֆէնտի յայտարարելով թէ խօսք տալու համար՝ ժողովին կամաց դիմելու հարկ կզգայ. քուէ կը խընդրէ այս մասին եւ ժողովը մեծագոյն մասամբ կՈՐՈՇէ չլսել Պէրպէրեան էֆէնտին:

Հետեւապէս Ատենապետ էֆէնտին ծրագրին առաջին յօդուածին վերադառնալով եւ տեսնելով որ անոր վրայ ուրիշ դիտողութիւն տեղի չունենար, քուէի կը դնէ զայն, բայց միայն 20 ձեռք ամբողջալով որոշող ձայնից միաբանութիւն չգոյանար, ուստի եւ Ատե-

նապետ էֆէնտին՝ նիստն իբր անբաւական՝ կը փակէ ժամը 9 ին:

Ժողովն յաջորդ նիստին Օրակարգ կորոշէ՝


Ա. — Հրաժարագիր Խորհրդարանական Յանձնախմբի:

Բ. — Մրագիր ուղղակի տրոց. — Վիճարանութիւնի վերայ Համարակալութեան դիւանի տեղեկագրին:

Գ. — Խնդիր վերաքննութեան Սահմանադրութեան. — Վիճարանութիւնի վերայ Նախաձեռնութեան դիւանի տեղեկագրոյն:

Դ. — Տեղեկագիր Մայր դիւանի. — Վիճարանութիւնի վերայ Ղալաթիոյ Թաղեցւոց աղերսագրոյն:

Ատենադպիր Ատենապետ
Մ. ՄԷԼԻԲԵԱՆ Ե. ՄԷՐԵԿՄ-ԳՈՒԼԻ



ԱՋԳԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԿՐՕՆԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Տ. Մկրտիչ	Ս. Արքեպս. Խրիմեան	Ա. Արեւուդէր
2	Տ. Խորէն	Ս. » Նար-պէյ	
3	Տ. Կարապետ	Ս. Եպս. Սերովբեան	
4	Տ. Մատթէոս	Ս. » Իզմիրլեան	Բ. Արեւուդէր
5	Տ. Ամբրոսիոս	Ծ. Վրդ. Ռուբինեան	
6	Տ. Գարեգին	Ծ. » Թաթարեան	
7	Տ. Եղնիկ	Ծ. » Ապահունի (Ս.աջ. պաշտօնիւ դուրս	
8	Տ. Իզնատիոս	Ծ. » Շիշեճեան	դացած)
9	Տ. Հմայեակ	Ծ. » Դիմաքսեան	
10	Տ. Ներսէս	Ծ. » Ասլանեան	
11	Տ. Պօղոս	Ծ. » Խօլտամեան	
12	Տ. Արիստակէս	Ա.ազ. Բհնյ. Մամբրէեան	
13	Տ. Խորէն	» Փէհլիվանեան	Բ. Արեւուդէր
14	Տ. Սահակ	» » Տ. Սարգիսեան	Ա. Արեւուդէր

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԺՈՂՈՎ

1	Ա.աքիւ Էֆէնտի	Ալթուն Տիւրքի	Ա. Արեւուդէր
2	Գէորգ	» Ստիմարաճեան	Ա. Արեւուդէր
3	Գէորգ	» Գըլըճեան	
4	Գարրիէլ	» Եսայեան	
5	Լօղօֆէթ	» Պալեօղեան	
6	Աբել	» Կիւլպէնկեան	(Հրաժարեալ)
7	Մարտիրոս	» Միւհէնտիսեան	
8	Մկրտիչ	» Յրէնկեան	
9	Յակոբ	» Զօպանեան	
10	Ղազարոս	» Հովուեան	(Հրաժարեալ)
11	Սահակ	» Ղազարոսեան	
12	Յակոբ	» Ծերունեան	(Հրաժարեալ)
13	Ստեփան	» Պէյլիկեան	Բ. Արեւուդէր
14	Խաչատուր Խան	» Տ. Նէրսիսեան	

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ ԿՈՒՆՍՏԱԿՆ

ԲՈՒՅՆ ԳՐԱԳՐԱԿԱՆ

Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	1
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	2
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	3
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	4
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	5
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	6
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	7
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	8
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	9
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	10
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	11
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	12
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	13
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	14

Գ/Ն 2 ԿՐԻՆ

ՍԵՓՋԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԿՆԵՐՄԱՆԱԿԱՆ ՍՆՏՈՒԿԱՆ

ՍԶԳՄԵՒՆ ԺՈՂՈՎՈՅ ԾԱԽՈՒՑ ԹԱՏԿԱՅԵՍԻ

Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	1
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	2
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	3
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	4
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	5
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	6
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	7
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	8
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	9
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	10
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	11
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	12
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	13
Ստեփանոս Բ. Բարեպետի Գրքեր	14

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի Է. Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ
Եկեղեցւոյ բանկայը Է. Հայ գրավաճառաց բոլ